ԱԼԱՇԿԵՐՏԻ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌԸ

Ալաշկերտի գաւառաբարբառին վերայ մասնաւոր ինչ խօսելն առաջ այս տեղ կուզեմ հարևանցի ակնարկ մի ձգել թէ Հայաստանի մէջ ըստ իս քանի գլխաւոր գաւառաբարբառ կայ, ոյք են իւրաքանչիւրի կեդրոնը և Ալաշկերտի գաւառաբարբառը ո՞ւստի մնած է։

Ընդհանրապէս գաւառաբարբառներու կեդրոն կարելի է համարուիլ Վան, Բաղէշ, Մուշ, Խարբերդ, Կարին և Երևան. և նոյն տեղերից տարածուած իւրեանց շուրջն և երբեմն մի կողմն հասանք կազմելով երկարացած է և քանի հեռացած է այնչափ աւելի փոփոխութիւն գտած է, սակայն միևնոյն ժամանակ հետախոյզ անձի համար կարելի է հասկանալ թէ կեդրոնը ուր է [1]։

Վանայ բարբառը տարածուած է իւր շուրջն և Արճէշ Բաշղալայ, Սալմաստ ևն. Խոյ, Մակու, Պայազիտ, Դիատին և Ուռմի և որոց մերձականեր։ Արևելեան հարաւ մինչև Հաքեարի, ի հարաւ Արտամէտ, Ռշտունիք և Խիզանի մէկ մասն ևն։

Երկրորդ՝ Բաղէշոյ բարբառն որ տարածուած է Խլաթ, Արծկէ, Բաղնոց և մնած է գրեթէ ամբողջութեամբ Բագրևանդայ Դարա-Քիլիսէն և մասնաւորապէս Ալաշկերտ։ Բաղեշէն նաև յարևելս Ցատիկ, Կէօզէլ, Տէրէ և Խիզան։ Ի՛սկ հարաւոյ Մոկս, մինչև Սղերտ, յարևմուտս Սասնոյ մէկ մասն, որ է Մոտկան։

Երրորդ՝ Մշոյ բարբառն տարածուած է ամբողջ

---

1. Կան այլ եւ այլ բազմաթիւ բարբառներ, որք եւս ունին իւրեանց ծիւղերն, օրինակ Ղարաբաղի բարբառն, որ ինչած է Սեւ ծովի եզրն, տարածուած ի Համշէն եւ Տրապիզօնի գիւղօրէից մէջ, ուստի Կիրասոն, Ճանիկ, Ամասիա Նեթոկիա եւ Կիլիկիոյ Զէյթունի լեռներու մէջ։